

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**Վերականգնման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող
«Էլեկտրամատակարարման հուսալիության ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում»
ծրագրի վերաբերյալ**

Վարկային համաձայնագրի անվանումը՝ Հայաստանի էլեկտրաէներգիայի մատակարարման հուսալիության ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում

Համաձայնագրի ստորագրման ամսաթիվը՝ 06.08.2014թ.

Համաձայնագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝ 03.02.2015թ.

Համաձայնագրով նախատեսված գումարը՝ 40 մլն ԱՄՆ դոլար (ըստ վարկային համաձայնագրի փոփոխություն N° 1-ի՝ (2017թ. հունիսի 8) 37,5 մլն ԱՄՆ դոլար, ըստ փոփոխություն N° 2-ի (2019թ. դեկտեմբերի 24) 36 մլն ԱՄՆ դոլար)

Համաձայնագրով նախատեսված տոկոսադրույքի չափը՝ ուղղորդիչ տոկոսադրույք (Libor)+ ՀԲ փոփոխական սփրեդ (2021թ.-ի փետրվարի 15-ի դրությամբ 0,93%)

Համաձայնագրի փակման ամսաթիվը՝ 31.12.2023թ.

Համաձայնագրով նախատեսված վարկի մարման սկիզբը և ավարտը՝
15.08.2024թ. - 15.02.2039թ.

Ըստ համաձայնագրի տրամադրված վարկային ծրագրի անվանումը՝ Հայաստանի էլեկտրաէներգիայի մատակարարման հուսալիության ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում

Ենթավարկային համաձայնագրի անվանումը՝ Հայաստանի էլեկտրաէներգիայի մատակարարման հուսալիության ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում

Ենթավարկային համաձայնագրի ստորագրման ամսաթիվը՝ 02.02.2015թ.

Ենթավարկային համաձայնագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝ 03.02.2015թ.

Ենթավարկային համաձայնագրով նախատեսված գումարը՝ 40 մլն ԱՄՆ դոլար (ըստ ենթավարկային համաձայնագրի N°1-ի՝ (2018թ. հուլիսի 13) 37.5 մլն ԱՄՆ դոլար, ըստ ենթավարկային համաձայնագրի (2018թ. փետրվարի 14) N°2-ի՝ 36.0 մլն ԱՄՆ դոլար)

Ենթավարկային համաձայնագրով նախատեսված տոկոսադրույքի չափը՝ ուղղորդիչ տոկոսադրույք (Libor)+ ՀԲ փոփոխական սփրեդ +1% (2021թ.-ի փետրվարի 15-ի դրությամբ 1,93%)

Ենթավարկային համաձայնագրի փակման ամսաթիվը՝ 31.12.2023թ.

Ենթավարկային համաձայնագրով նախատեսված վարկի մարման սկիզբը և ավարտը՝
15.08.2024թ. - 15.02.2039թ.

Ծրագրի նպատակը՝ ծրագրի շրջանակներում նախատեսվում է փոխարինել 220/110/10 կՎ «Հաղթանակ» («Հաղթանակ» ենթակայանի վերականգնման աշխատանքներն ավարտվել են 30.05.2019թ.-ին), 110/10/6 կՎ «Վանաձոր-1» և 110/10 կՎ «Զարենցավան-3», 220/110/10 կՎ «Զովունի» ենթակայանների 30 և ավել տարիներ շահագործման մեջ գտնվող ֆիզիկապես և բարոյապես մաշված սարքավորումները:

Ակնկալվող արդյունքները՝ Բարձրացնել սպառողների անխափան էլեկտրաէներգիայի մատակարարման հուսալիությունը, ինչպես նաև նվազեցնել ենթակայանների շահագործման ծախսերը:

Ծրագրի խորհրդատուի անվանումը՝ «decon international GmbH/ Consulectra Unternehmensberatung GmbH»

Պայմանագրի անվանումը՝ «Հաղթանակ», «Չարենցավան-3» և «Վանաձոր-1» ենթակայանների վերակառուցման իրականացման օժանդակության և վերակառուցման վերահսկողության խորհրդատվական ծառայություն

Պայմանագրի գումարը՝ 1,015,155.51 եվրո՝ ներառյալ ոչ ռեզիդենտի շահութահարկը

Պայմանագրի ստորագրման ամսաթիվը՝ 08.12.2016թ.

Պայմանագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝ 08.12.2016թ.

Պայմանագրով նախատեսված աշխատանքների սկիզբը և ավարտը՝
08.12.2016թ. - 30.09.2021թ.

Ծրագրի կապալառուներ՝

1. Kaskad-Energo LLC

Պայմանագրի անվանումը՝ «220/110/10 կՎ «Հաղթանակ» ենթակայանի վերակառուցման նախագծում, մատակարարում և տեղակայում», № HV-W-ESRAF-1/2015_1

Պայմանագրի գումարը՝ 13,831,650.00 ԱՄՆ դոլար

Պայմանագրի ստորագրման ամսաթիվը՝ 01.07.2016թ.

Պայմանագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝ 26.08.2016թ.

Պայմանագրով նախատեսված աշխատանքների սկիզբը և ավարտը՝
26.08.2016թ. - 30.05.2019թ.

2. Xian Electric Engineering Co. Ltd

Պայմանագրի անվանումը՝ «110/10/6 կՎ «Վանաձոր-1» ենթակայանի վերակառուցման նախագծում, մատակարարում և տեղակայում», № HV-W-ESRAF-1/2015_3

Պայմանագրի գումարը՝ 4,084,575.00 ԱՄՆ դոլար

Պայմանագրի ստորագրման ամսաթիվը՝ 01.07.2016թ.

Պայմանագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝ 01.09.2016թ.

Պայմանագրով նախատեսված աշխատանքների սկիզբը և ավարտը՝
01.09.2016թ. - 31.12.2018թ.

3. Efacec Engenharia e Sistemas S.A

Պայմանագրի անվանումը՝ «110/10 կՎ «Չարենցավան-3» ենթակայանի վերակառուցման նախագծում, մատակարարում և տեղակայում», № HV-W-ESRAF-1/2015_2

Պայմանագրի գումարը՝ 2,521,639.29 ԱՄՆ դոլար

2,946,265.35 եվրո

658,639,773.67 ՀՀ դրամ

Պայմանագրի ստորագրման ամսաթիվը՝ 01.07.2016թ.

Պայմանագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝ 13.09.2016թ.

Պայմանագրով նախատեսված աշխատանքների սկիզբը և ավարտը՝

4. 13.09.2016թ. - 13.07.2018թ. (2021թ. մարտի 12-ին «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության և Efacec Engenharia e Sistemas S.A միջև ստորագրված պայմանագրի Փոփոխություն 3-ի համաձայն, աշխատանքների ավարտման ժամկետը պետք է լինի 23 ամիս՝ հաշվարկված «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության կողմից փոխհատուցման ենթակա ծախսի (900 000.0 եվրո) վճարման օրվանից)

Ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքները 31.03.2021թ. դրությամբ՝

Խորհրդատվական ծառայություններ՝

- *Վարկային միջոցների հաշվին* - 773,398.28 ԱՄՆ դոլար
- *ՀՀ պետական բյուջեի հաշվին* - 193,349.55 դոլար
- Ընդամենը* - 966,747.83 ԱՄՆ դոլար

Kaskad-Energo LLC կողմից կատարված շինմոնտաժային աշխատանքներ

- *Վարկային միջոցների հաշվին* - 3,368,580.00 ԱՄՆ դոլար
- *ՀՀ պետական բյուջեի հաշվին* - 673,716.00 ԱՄՆ դոլար
- Ընդամենը* - 4,042,296.00 ԱՄՆ դոլար

Kaskad-Energo LLC կողմից մատակարարված սարքեր և սարքավորումներ

- *Վարկային միջոցների հաշվին* - 10,463,070.00 ԱՄՆ դոլար
- *ՀՀ պետական բյուջեի հաշվին* - 215,600.00 ԱՄՆ դոլար
- Ընդամենը* - 10,678,670.00 ԱՄՆ դոլար

Xian Electric Engineering Co. կողմից կատարված շինմոնտաժային աշխատանքներ

- *Վարկային միջոցների հաշվին* - 1,330,236.17 ԱՄՆ դոլար
- *ՀՀ պետական բյուջեի հաշվին* - 284,497.82 ԱՄՆ դոլար
- Ընդամենը* - 1,614,733.99 ԱՄՆ դոլար

Xian Electric Engineering Co. կողմից մատակարարված սարքեր և սարքավորումներ

- *Վարկային միջոցների հաշվին* - 2,155,730.87 ԱՄՆ դոլար
- *ՀՀ պետական բյուջեի հաշվին* - 72,122.45 ԱՄՆ դոլար
- Ընդամենը* - 2,227,853.32 ԱՄՆ դոլար

EFACEC Engenharia e Sistemas, S.A կողմից մատակարարված սարքեր և սարքավորումներ

- *Վարկային միջոցների հաշվին* - 1,630,409.11 ԱՄՆ դոլար
- *ՀՀ պետական բյուջեի հաշվին* - 137,257.85 ԱՄՆ դոլար
- Ընդամենը* - 1,767,666.96 ԱՄՆ դոլար

Այլ ծախսեր

- *Վարկային միջոցների հաշվին* - 119,952.57 ԱՄՆ դոլար

- ՀՀ պետական բյուջեի հաշվին - 6,218.49 ԱՄՆ դոլար
Ընդամենը - 126,171.06 ԱՄՆ դոլար

Ընդհանուր կատարված աշխատանքները, այդ թվում՝

- Վարկային միջոցների հաշվին - 19,841,376.92 ԱՄՆ դոլար
- ՀՀ պետական բյուջեի հաշվին - 1,582,764.57 ԱՄՆ դոլար
Ընդամենը - 21,424,141.49 ԱՄՆ դոլար

Ծրագրի շրջանակներում կատարված վճարումները 31.03.2021թ. դրությամբ՝

Խորհրդատվական ծառայություններ՝

- Վարկային միջոցների հաշվին - 759,424.92 ԱՄՆ դոլար
- ՀՀ պետական բյուջեի հաշվին - 189,885.70 ԱՄՆ դոլար
Ընդամենը - 949,310.62 ԱՄՆ դոլար

Kaskad-Energo LLC կողմից կատարված շինմոնտաժային աշխատանքների դիմաց՝

- Վարկային միջոցների հաշվին - 3,368,580.40 ԱՄՆ դոլար
- ՀՀ պետական բյուջեի հաշվին - 673,716.00 ԱՄՆ դոլար
Ընդամենը - 4,042,296.40 ԱՄՆ դոլար

Kaskad-Energo LLC մատակարարված սարքերի և սարքավորումների դիմաց՝

- Վարկային միջոցների հաշվին - 10,327,745.25 ԱՄՆ դոլար
- ՀՀ պետական բյուջեի հաշվին - 215,600.00 ԱՄՆ դոլար
Ընդամենը - 10,543,345.25 ԱՄՆ դոլար

Xian Electric Engineering Co. կողմից կատարված շինմոնտաժային աշխատանքների դիմաց՝

- Վարկային միջոցների հաշվին - 1,348,559.51 ԱՄՆ դոլար
- ՀՀ պետական բյուջեի հաշվին - 376,665.81 ԱՄՆ դոլար
Ընդամենը - 1,725,225.32 ԱՄՆ դոլար

Xian Electric Engineering Co. կողմից մատակարարված սարքերի և սարքավորումների դիմաց՝

- Վարկային միջոցների հաշվին - 1,831,183.36 ԱՄՆ դոլար
- ՀՀ պետական բյուջեի հաշվին - 73,470.84 ԱՄՆ դոլար
Ընդամենը - 1,904,654.20 ԱՄՆ դոլար

EFACEC Engenharia e Sistemas, S.A կատարված շինմոնտաժային աշխատանքների դիմաց՝

- Վարկային միջոցների հաշվին - 299,721.81 ԱՄՆ դոլար
- ՀՀ պետական բյուջեի հաշվին - 0 ԱՄՆ դոլար
Ընդամենը - 299,721.81 ԱՄՆ դոլար

EFACEC Engenharia e Sistemas, S.A կողմից մատակարարված սարքերի և սարքավորումների դիմաց՝

- Վարկային միջոցների հաշվին - 1,562,354.66 ԱՄՆ դոլար
- ՀՀ պետական բյուջեի հաշվին - 136,132.66 ԱՄՆ դոլար
Ընդամենը - 1,698,487.32 ԱՄՆ դոլար

Այլ ծախսեր՝

- Վարկային միջոցների հաշվին - 119,981.57 ԱՄՆ դոլար
- ՀՀ պետական բյուջեի հաշվին - 6,233.15 ԱՄՆ դոլար
Ընդամենը - 126,214.72 ԱՄՆ դոլար

Ընդհանուր կատարված վճարումները, այդ թվում՝

- Վարկային միջոցների հաշվին - 19,617,551.42 ԱՄՆ դոլար
- ՀՀ պետական բյուջեի հաշվին - 1,671,704.16 ԱՄՆ դոլար
Ընդամենը - 21,289,255.58 ԱՄՆ դոլար

Ծրագրի ընթացիկ իրավիճակը՝

Ավարտվել են «Հաղթանակ» ենթակայանի վերակառուցման աշխատանքները: «Վանաձոր-1» ենթակայանի վերակառուցման շրջանակներում իրականացվում են շինմոնտաժային աշխատանքներ: Պատվիրատուի և չինական «Xian Electric Engineering Co. Ltd» ընկերության միջև 2016 թվականի հուլիսի 1-ին կնքված «Վանաձոր-1» 110 կՎ ենթակայանի վերակառուցման նախագծում, մատակարարում և տեղակայում» № HV-W-ESRAF-1/2015_3 պայմանագրի համաձայն՝ «Վանաձոր-1» ենթակայանի վերակառուցման աշխատանքների կատարման ժամկետի ավարտ է սահմանվել 2018 թվականի դեկտեմբերի 31-ը: Ենթակայանում աշխատանքների դանդաղ տեմպերի պատճառով վերակառուցման աշխատանքները դեռևս չեն ավարտվել:

ՀՀ ՏԿԵՆ կառավարման խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ) 2021 թվականի փետրվարի 18-ի № 2-06-02/21 որոշմամբ հաստատել է Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող էլեկտրամատակարարման հուսալիության ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման ծրագրի շրջանակներում «Զովունի» ենթակայանի վերակառուցման (Լոտ 2) գլխավոր կապալառուի ընտրության մրցութային փաստաթղթերում փոփոխություն կատարելու վերաբերյալ առաջարկությունը: Հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 2021թ. մարտի 31-ը: Ներկայումս իրականացվում է մրցութային փաստաթղթերի փաթեթների գնահատման գործընթաց:

«Զարենցավան-3» ենթակայանի վերակառուցման ծրագրի շրջանակներում գլխավոր կապալառու «EFACEC Engenharia e Sistemas, S.A.» ընկերության հետ կնքված պայմանագրի (Պայմանագիր) վերսկսման և ենթակայանի վերակառուցման աշխատանքների շարունակման նպատակով «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերությունը և կապալառուն գործընկերային հարաբերությունների շրջանակներում բանակցել են պայմանագրի իրականացման երկուստեք ընդունելի լուծումներ գտնելու հնարավորությունների շուրջ: Բանակցությունների արդյունքում ձեռք բերված

փոխգլխումային համաձայնությունը ներկայացվել է Խորհրդի քննարկմանը: 2021թ. փետրվարի 11-ի № 1-02-04/21 որոշմամբ Խորհուրդը համաձայնություն է տվել Պայմանագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկությանը: Ի կատարումն Խորհրդի 2021թ. փետրվարի 11-ի № 1-02-04/21 որոշմամբ տրված հանձնարարականի՝ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության և «EFACEC Engenharia e Sistemas, S.A.» ընկերության միջև 2021 թվականի մարտի 12-ին կնքված պայմանագրի փոփոխություն № 3-ի համաձայն՝ պայմանագրի գինը աճել է 900,000.0 եվրոյով:

Ենթակայանի վերակառուցումը նախատեսվում է ավարտել 2023 թվականին:

«Զովունի» ենթակայանի վերակառուցման աշխատանքները նախատեսվում է ավարտել 2024 թվականին:

Ծրագիրն իրականացվում է «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ կողմից: